ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբեր 2021 թվականի N 296-Հ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի ԹԻՎ 16/2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 23/11 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ, 13-րդ կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 3-րդ մասով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2021 թվականի հոկտեմբերի 27-ի համաձայնությունը՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հուլիսի 29-ի թիվ 16/2 որոշման թիվ 69 և 75 հավելվածները:
2. Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 23/11 որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

   1) «Տասներորդ վարչություն» և «իրավաբանական բաժին» գլուխների 103-րդ և 127-րդ տողերը ուժը կորցրած ճանաչել.

2) «Տասներորդ վարչություն» գլխի «108.«խորհրդական»»բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝ «108.1 «խորհրդական»» բառերով.

3) «Հայեցողական պաշտոններ» գլխի «9.1«նախագահի խորհրդական» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝ «9.2«նախագահի խորհրդական»» բառերով:

1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ